13 սեպտեմբերի 2013 թվականի N 1009 – Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 674 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 3-ի «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 674 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները`

1) որոշման 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված N 1 ձևի աղյուսակը 8-րդ սյունակից («Գործունեության տեսակը») հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր սյունակներով`

«

| Լիցենզավորվող գործունեությունների, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների դասակարգիչը | | | |
|---|---|---|---|
| սիմվոլը | հոդվածը | կետը | ենթակետը |
| 8.1 | 8.2 | 8.3 | 8.4 |

».

2) որոշման 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված N 2 ձևի աղյուսակում՝

ա. 6-րդ սյունակից («Գործունեության տեսակը») հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր սյունակներով.

«

| Լիցենզավորվող գործունեությունների, ինչպես նաև պետական սեփականություն |
|---|

| հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների դասակարգիչը | | | |
|---|---|---|---|
| սիմվոլը | հոդվածը | կետը | ենթակետը |
| 6.1 | 6.2 | 6.3 | 6.4 |

»,

բ. 14-րդ սյունակը («Տեղեկություններ լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցման մասին») շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| Տեղեկություններ լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցման մասին | |
|---|---|
| գործողության դադարեցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | գործողության դադարեցման դիմումի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը |
| 14 | 14.1 |

».

3) որոշման 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված N 3 ձևի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ` համաձայն N 1 հավելվածի.

4) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Սահմանել լիցենզավորվող գործունեությունների, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների դասակարգիչը՝ համաձայն N 1 հավելվածի:».

5) որոշման NN 1 և 2 ձևերի աղյուսակներում «սոցիալական ապահովության քարտի համարը» բառերը փոխարինել «հանրային ծառայության համարանիշը» բառերով.

6) որոշումը լրացնել նոր՝ N 1 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

2. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված լիցենզավորող և թույլտվություններ տրամադրող լիազորված մարմինները մինչև 2013 թվականի նոյեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե միանվագ ներկայացնում են տեղեկություններ՝ 2013 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ իրենց կողմից տրված գործող լիցենզիաների և թույլտվու-թյունների մասին՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1009 - Ն որոշման

«ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 3-ի N 674 որոշման

Ձև N 3

# Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

**20 թ. ________________ ամսվա համար**

_____________________________________________

(տեղեկություններ ներկայացնող մարմնի անվանումը)

| NN ը/կ | Տեղեկություններ լիցենզավորված անձանց վերաբերյալ | | | Տեղեկություններ լիցենզիաների, այդ թվում նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների վերաբերյալ | | | | Տեղեկություններ ներդիրների վերաբերյալ | | | Ներդիրն ստանալու համար պետական տուրքի վճարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | Լիցենզավորվող, այդ թվում `նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների գործունեությունների դասակարգիչ | | | | Տեղեկություններ լիցենզիայի, այդ թվում` նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվության վերաձևակերպման մասին | | | Տեղեկություններ լիցենզիայի, այդ թվում`նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվության կամ ներդիրի գործողության կասեցման մասին | | | | Տեղեկություններ լիցենզիայի, այդ թվում նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվության կամ ներդիրի գործողության դադարեցման մասին | | | | Ծանոթա-գրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրավաբանական անձի անվանումը, կազմակեր-պական- իրավական ձևը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնար-կատիրոջ) անունը, ազգանունը, հանրային ծառայության համարանիշը (առկայության դեպքում) | հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | իրավա-բանական անձի գտնվելու (անհատ ձեռնար-կատիրոջ բնակության) վայրը | սերիան | համարը | գործու-նեության տեսակը | տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | համարը | գործու-նեության ոլորտը | տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | սիմվոլը | հոդվածը | կետը | ենթա-կետը | որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | լիցենզիայի գրանցված փոփո-խությունը | ներդիրի գրանցված փոփո-խությունը | կասեցման մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | դադարեցման մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | դադարեցման մասին դիմումի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | լիցենզիա | ներդիր | լիցենզիա | ներդիր | լիցենզիա | ներդիր | լիցենզիա | ներդիր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1009 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 3-ի N 674 որոշման

**Լիցենզավորվող գործունեությունների, այդ թվում նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների դասակարգիչ**

| սիմվոլը | հոդվածը | կետը | ենթա-կետը | լիցենզավորման գործունեության |
|---|---|---|---|---|
| A | 19.00 | 1.00.0 | | **1. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| A | 19.00 | 1.01.0 | 1.01.00 | «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական` մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում |
| B | 19.00 | 2.00.0 | | **2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| B | 19.00 | 2.01.0 | 2.01.00 | դեղերի արտադրություն |
| B | 19.00 | 2.04.0 | 2.04.00 | դեղատնային գործունեություն |
| B | 19.00 | 2.05.0 | 2.05.00 | Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում |
| B | 19.00 | 2.06.0 | 2.06.00 | Գենետիկ ինժեներիայի գործունեություն |
| B | 19.00 | 2.07.0 | 2.07.00 | բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացում |
| B | 19.00 | 2.08.0 | 2.08.00 | բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի իրականացում |
| C | 19.00 | 3.00.0 | | **3. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| C | 19.00 | 3.01.0 | 3.01.00 | արտարժույթի առուվաճառք |
| C | 19.00 | 3.02.0 | 3.02.00 | Արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպում |
| C | 19.00 | 3.03.0 | 3.03.00 | Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք |
| D | 19.00 | 4.00.0 | | **4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| D | 19.00 | 4.02.0 | 4.02.00 | ներդրումային ծառայությունների մատուցում |
| D | 19.00 | 4.03.0 | 4.03.01 | Կարգավորվող շուկայի օպերատորի գործունեություն |
| D | 19.00 | 4.03.0 | 4.03.02 | Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեություն |
| D | 19.00 | 4.04.0 | 4.04.00 | ֆոնդի կառավարման գործունեություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| E | 19.00 | 5.00.0 | | **5. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| E | 19.00 | 5.01.0 | 5.01.00 | Բանկային գործունեություն |
| E | 19.00 | 5.02.0 | 5.02.00 | Գրավատների կազմակերպում |
| E | 19.00 | 5.04.0 | 5.04.01 | կյանքի յուրաքանչյուր դասի ապահովագրության իրականացում |
| E | 19.00 | 5.04.0 | 5.04.02 | ոչ կյանքի յուրաքանչյուր դասի ապահովագրության իրականացում |
| E | 19.00 | 5.04.0 | 5.04.03 | Կյանքի վերաապահովագրության իրականացում |
| E | 19.00 | 5.04.0 | 5.04.04 | Ոչ կյանքի վերաապահովագրության իրականացում |
| E | 19.00 | 5.05.0 | 5.05.00 | Ինկասացիոն ծառայությունների մատուցում |
| E | 19.00 | 5.06.0 | 5.06.00 | Ապահովագրական բրոքերային գործունեություն |
| E | 19.00 | 5.07.0 | 5.07.00 | Աուդիտորական ծառայությունների իրականացում |
| E | 19.00 | 5.08.0 | 5.08.00 | Վարկային կազմակերպության գործունեություն |
| E | 19.00 | 5.09.0 | 5.09.00 | Դրամական (փողային) փոխանցումների իրականացում |
| E | 19.00 | 5.10.0 | 5.10.00 | Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում |
| E | 19.00 | 5.11.0 | 5.11.00 | Վարկային բյուրոյի գործունեություն |
| F | 19.00 | 6.00.0 | | **6.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| F | 19.00 | 6.03.0 | 6.03.00 | Անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրություն |
| F | 19.00 | 6.04.0 | 6.04.00 | Անասնաբուժասանիտարական փորձաքննություն |
| F | 19.00 | 6.05.0 | 6.05.00 | Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրություն և (կամ) վաճառք |
| G | 19.00 | 7.00.0 | | **7. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| G | 19.00 | 7.01.0 | 7.01.00 | բնական գազի ներկրում |
| G | 19.00 | 7.02.0 | 7.02.00 | բնական գազի փոխադրում |
| G | 19.00 | 7.03.0 | 7.03.00 | բնական գազի բաշխում |
| G | 19.00 | 7.04.0 | 7.04.00 | բնական գազի արտահանում |
| G | 19.00 | 7.05.0 | | էլեկտրական էներգիայի արտադրություն |
| G | 19.00 | 7.05.0 | 7.05.01 | մինչև 6 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայաններ |
| G | 19.00 | 7.05.0 | 7.05.02 | 6-15 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայաններ |
| G | 19.00 | 7.05.0 | 7.05.03 | 15-25 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայաններ |
| G | 19.00 | 7.05.0 | 7.05.04 | 25-50 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայաններ |
| G | 19.00 | 7.05.0 | 7.05.05 | 50 մՎտ-ից բարձր դրվածքային հզորության կայաններ |
| G | 19.00 | 7.06.0 | 7.06.00 | էլեկտրական էներգիայի ներկրում |
| G | 19.00 | 7.07.0 | 7.07.00 | էլեկտրական էներգիայի հաղորդում |
| G | 19.00 | 7.08.0 | 7.08.00 | էլեկտրական էներգիայի բաշխում |
| G | 19.00 | 7.09.0 | 7.09.00 | էլեկտրական էներգիայի արտահանում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **G** | 19.00 | 7.10.0 | 7.10.00 | ջերմային էներգիայի արտադրություն |
| **G** | 19.00 | 7.11.0 | 7.11.00 | ջերմային էներգիայի փոխադրում |
| **G** | 19.00 | 7.12.0 | 7.12.00 | ջերմային էներգիայի բաշխում |
| **G** | 19.00 | 7.13.0 | 7.13.00 | էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայություններ |
| **G** | 19.00 | 7.14.0 | 7.14.00 | Էներգետիկական շուկային մատուցվող ծառայություններ |
| **G** | 19.00 | 7.15.0 | 7.15.00 | էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի և բնական գազի համակարգերում նոր արտադրական հզորությունների կառուցում (վերականգնում) |
| **H** | 19.00 | 8.00.0 | | **8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **H** | 19.00 | 8.01.0 | 8.01.00 | Նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում |
| **H** | 19.00 | 8.02.0 | 8.02.00 | Տարրական հանրակրթական ծրագրի իրականացում |
| **H** | 19.00 | 8.03.0 | 8.03.00 | Հիմնական հանրակրթական ծրագրի իրականացում |
| **H** | 19.00 | 8.04.0 | 8.04.00 | Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացում |
| **H** | 19.00 | 8.05.0 | 8.05.01 | Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացում |
| **H** | 19.00 | 8.05.0 | 8.05.02 | Միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացում (բացառությամբ բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրի) |
| **H** | 19.00 | 8.05.0 | 8.05.03 | Բակալավրի կրթական ծրագրի իրականացում (բացառությամբ բժշկակական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի) |
| **H** | 19.00 | 8.05.0 | 8.05.05 | Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացում (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի) |
| **I** | 19.00 | 9.00.0 | | **9. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **I** | 19.00 | 9.01.0 | 9.01.00 | Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործում |
| **I** | 19.00 | 9.02.0 | 9.02.00 | ձայնային ծառայությունների մատուցում |
| **I** | 19.00 | 9.05.0 | 9.05.00 | Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում |
| **I** | 19.00 | 9.06.0 | | Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում |
| **I** | 19.00 | 9.06.0 | 9.06.01 | Հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում |
| **I** | 19.00 | 9.06.0 | 9.06.02 | Ռադիոհաղորդումների հեռարձակում |
| **I** | 19.00 | 9.07.0 | 9.07.03 | Հեռուստահաղորդումների կաբելային (մալուխային) հեռարձակում |
| **J** | 19.00 | | | **9[1]. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **J** | 19.00 | 9.08.0 | 9.08.00 | փոստային կապի գործունեություն |
| **K** | 19.00 | 10.00.0 | | **10. ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **K** | 19.00 | 10.01.0 | | մաքսային պահեստներում և ազատ մաքսային պահեստներում ապրանքների պահպանություն, այդ թվում՝ |
| **K** | 19.00 | 10.01.0 | 10.00.01 | մաքսային պահեստներում մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանություն |
| **K** | 19.00 | 10.01.0 | 10.00.02 | ազատ մաքսային պահեստներում ապրանքների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պահպանություն |
| K | 19.00 | 10.02.0 | 10.02.00 | անմաքս առևտրի խանութներում մաքսային հսկողության ներքո ապրանքների իրացում |
| K | 19.00 | 10.03.0 | 10.03.00 | մաքսային փոխադրողի գործունեություն |
| K | 19.00 | 10.04.0 | 10.04.00 | մաքսային հսկողության տարածքների կազմակերպում |
| L | 19.00 | 11.00.0 | | **11. ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| L | 19.00 | 11.01.0 | 11.01.00 | միջուկային տեղակայանքների հրապարակի ընտրում |
| L | 19.00 | 11.02.0 | 11.02.00 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանների հրապարակի ընտրում |
| L | 19.00 | 11.03.0 | 11.03.00 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների հրապարակի ընտրում |
| L | 19.00 | 11.04.0 | 11.04.00 | միջուկային տեղակայանքների նախագծում |
| L | 19.00 | 11.05.0 | 11.05.00 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանների նախագծում |
| L | 19.00 | 11.06.0 | 11.06.00 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների նախագծում |
| L | 19.00 | 11.07.0 | 11.07.00 | միջուկային տեղակայանքների կառուցում |
| L | 19.00 | 11.08.0 | 11.08.00 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կառուցում |
| L | 19.00 | 11.09.0 | 11.09.00 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների կառուցում |
| L | 19.00 | 11.10.0 | 11.10.00 | միջուկային տեղակայանքների շահագործում |
| L | 19.00 | 11.11.0 | 11.11.00 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանների շահագործում |
| L | 19.00 | 11.12.0 | 11.12.00 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների շահագործում |
| L | 19.00 | 11.13.0 | 11.13.00 | միջուկային տեղակայանքները շահագործումից հանում |
| L | 19.00 | 11.14.0 | 11.14.00 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանները շահագործումից հանում |
| L | 19.00 | 11.15.0 | 11.15.00 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցները շահագործումից հանում |
| L | 19.00 | 11.16.0 | 11.16.00 | միջուկային նյութերի ներմուծում կամ արտահանում |
| L | 19.00 | 11.17.0 | 11.17.00 | ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի ներմուծում կամ արտահանում |
| L | 19.00 | 11.18.0 | 11.18.00 | ռադիոակտիվ թափոնների ներմուծում կամ արտահանում |
| L | 19.00 | 11.19.0 | 11.19.00 | միջուկային նյութերի օգտագործում |
| L | 19.00 | 11.20.0 | 11.20.00 | միջուկային նյութերի փոխադրում |
| L | 19.00 | 11.21.0 | 11.21.00 | միջուկային նյութերի պահեստավորում |
| L | 19.00 | 11.22.0 | 11.22.00 | միջուկային նյութերի արտադրություն |
| L | 19.00 | 11.23.0 | 11.23.00 | Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ փոխադրում կամ պահեստավորում |
| L | 19.00 | 11.24.0 | 11.24.00 | Ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի արտադրություն կամ օգտագործում կամ վերանորոգում կամ մոնտաժում և կարգաբերում կամ փոխադրում կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պահեստավորում |
| **L** | 19.00 | 11.25.0 | 11.25.00 | Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում կամ կարգաբերում |
| **L** | 19.00 | 11.26.0 | 11.26.00 | ռադիոակտիվ թափոնների վերամշակում |
| **L** | 19.00 | 11.27.0 | 11.27.00 | ռադիոակտիվ թափոնների պահում |
| **L** | 19.00 | 11.28.0 | 11.28.00 | Միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության իրականացում |
| **L** | 19.00 | 11.29.0 | 11.29.00 | ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծում |
| **L** | 19.00 | 11.30.0 | 11.30.00 | ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի պատրաստում |
| **L** | 19.00 | 11.31.0 | 11.31.00 | ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի և այլ փաստաթղթերի փորձաքննություն |
| **L** | 19.00 | 11.32.0 | 11.32.00 | ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեություն |
| **M** | 19.00 | 12.00.0 | | **12. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **M** | 19.00 | 12.01.0 | 12.01.00 | Վտանգավոր թափոնների վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում |
| **M** | 19.00 | 12.03.0 | 12.03.00 | Օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման թույլտվություն |
| **N** | 19.00 | 14.00.0 | | **14. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ, ՇԱՀՈՒՄՆԵՐՈՎ ԽԱՂԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **N** | 19.00 | 14.01.0 | 14.01.00 | վիճակախաղերի կազմակերպում |
| **N** | 19.00 | 14.02.0 | 14.02.00 | Շահումներով խաղերի կազմակերպում |
| **N** | 19.00 | 14.03.0 | 14.03.00 | Խաղատների կազմակերպում |
| **N** | 19.00 | 14.04.0 | 14.04.00 | Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում |
| **O** | 19.00 | 15.00.0 | | **15. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **O** | 19.00 | 15.03.0 | 15.03.00 | Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում |
| **O** | 19.00 | 15.04.0 | 15.04.00 | Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն |
| **O** | 19.00 | 15.04.0 | 15.04.00 | Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում |
| **O** | 19.00 | 15.05.0 | | Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում |
| **O** | 19.00 | 15.05.0 | 15.05.01 | անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կազմակերպում |
| **O** | 19.00 | 15.05.0 | 15.05.02 | անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ավտոմոբիլներով և կազմակերպությունների կողմից (անկախ ավտոմոբիլների քանակից) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում |
| **P** | 19.00 | 16.00.0 | | **16. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** |
| **P** | 19.00 | 16.01.0 | 16.01.00 | Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) |
| **P** | 19.00 | 16.02.0 | 16.02.00 | Շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) |
| **P** | 19.00 | 16.03.0 | 16.03.00 | Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) |
| **P** | 19.00 | 16.04.0 | 16.04.00 | Ինժեներական հետազննում |
| **P** | 19.00 | 16.05.0 | 16.05.00 | Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն |
| **Q** | 19.00 | 18.00.0 | | **18. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ** |
| **Q** | 19.00 | 18.01.0 | 18.01.00 | Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացում |
| **Q** | 19.00 | 18.08.0 | | Սննդամթերքի արտադրության համար, այդ թվում՝ |
| **Q** | 19.00 | 18.08.0 | 18.08.01 | Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն |
| **Q** | 19.00 | 18.08.0 | 18.08.02 | «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն |
| **Q** | 19.00 | 18.08.0 | 18.08.03 | «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն |
| **Q** | 19.00 | 18.08.0 | 18.08.04 | Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | արտադրություն |
| **Q** | 19.00 | 18.08.0 | 18.08.05 | Գարեջրի արտադրություն |
| **Q** | 19.00 | 18.09.0 | 18.09.00 | «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում |
| **Q** | 19.00 | 18.10.0 | 18.10.00 | Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում |
| **Q** | 19.00 | 18.12.0 | 18.12.01 | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն |
| **Q** | 19.00 | 18.12.0 | 18.12.02 | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր |
| **Q** | 19.00 | 18.14.0 | | Առևտրի իրականացման վայրի կազմակերպման համար՝ |
| **Q** | 19.00 | 18.14.0 | 18.14.01 | Երևան քաղաքում կազմակերպում |
| **Q** | 19.00 | 18.14.0 | 18.14.02 | Մարզկենտրոններում կազմակերպում |
| **Q** | 19.00 | 18.14.0 | 18.14.03 | Երևան քաղաքից և մարզկենտրոններից դուրս կազմակերպում |
| **Q** | 19.00 | 19.00.0 | 19.00.00 | **Բացի տուրքերի մասին օրենքի 19-րդ հոդվածի 1-18.14-րդ կետերում, ինչպես նաև 19.10-րդ և 19.20-րդ հոդվածներում նշված դեպքերից՝** |
| **R** | 19.10 | | | **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիցենզիաներ, թույլտվություններ և սերտիֆիկատներ** |
| **R** | 19.10 | | | *Իրավաբանական անձանց տրվող լիցենզիաներ* |
| **R** | 19.10 | 1.00.0 | 1.00.00 | 1. Քաղաքացիական և ծառայողական զենքի և դրանց փամփուշտների արտադրություն |
| **R** | 19.10 | 2.00.0 | 2.00.00 | 2. Քաղաքացիական և ծառայողական զենքի գեղարվեստական հարդարում, նորոգում |
| **R** | 19.10 | 3.00.0 | 3.00.00 | 3. Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտուր |
| **R** | 19.30 | | | **Ռազմական նշանակության արտադրանքի** |
| **R** | 19.30 | 1.00.0 | 1.00.00 | Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում |
| **R** | 19.30 | 2.00.0 | 2.00.00 | Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում |
| **R** | 19.30 | 3.00.0 | 3.00.00 | Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն |
| **R** | 19.50 | 1.00.0 | | |
| **R** | 19.50 | 1.01.0 | 1.01.00 | Մասնավոր պահնորդական գործունեություն |
| **R** | 19.50 | 1.02.0 | 1.02.00 | Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն |
| **R** | 19.50 | 1.03.0 | 1.03.00 | Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարում |
| **R** | 19.50 | 1.04.0 | 1.04.00 | Հրազործական ապրանքների արտադրություն, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ներմուծում կամ առևտուր |
| T | 19.40 | | | **Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործում (շահագործում)** |
| T | 19.40 | 1.00.0 | 1.00.00 | 1) ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների հանքավայրի օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 2.00.0 | 2.00.00 | 2) վառելիքաէներգետիկ հումքիհանքավայրի օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 3.00.0 | 3.00.00 | 3) շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսպատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի  հանքավայրի օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 4.00.0 | 4.00.00 | 4) գունազեղ քարերի հանքավայրի օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 5.00.0 | 5.00.00 | 5) մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի հանքավայրի օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 6.00.0 | | 6) հանքային ջրերի  հանքավայրի կամ հանքահորի՝ |
| T | 19.40 | 6.00.0 | 6.00.01 | արդյունաբերական (շշալցման) նպատակով օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 6.00.0 | 6.00.02 | արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 6.00.0 | 6.00.03 | բուժական (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործում (շահագործում) |
| T | 19.40 | 7.00.0 | 7.00.00 | 7) ջրօգտագործում |
| T | 19.40 | 8.00.0 | 8.00.00 | 8) ջրային համակարգի օգտագործում |
| T | 19.40 | 9.00.0 | 9.00.00 | 9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ                                        Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2013 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1009 - Ն որոշման

«Ձև

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**

**20 թ. ________________ ամսվա համար**

______________________________________________
(տեղեկություններ ներկայացնող մարմնի անվանումը)

| NN ը/կ | Տեղեկություններ լիցենզավորված անձանց վերաբերյալ | | | | Տեղեկություններ լիցենզիաների, այդ թվում՝ նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների վերաբերյալ | | | | Տեղեկություններ ներդիրների վերաբերյալ | | | Լիցենզիան կամ թույլտվությունը (ներդիրը) ստանալու համար պետական տուրքի վճարման ամսաթիվը | Լիցենզավորվող, այդ թվում՝ նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվությունների գործունեությունների դասակարգիչ | | | | Տեղեկություններ լիցենզիայի, այդ թվում՝ նաև պետական սեփականություն հանդիսացող ընդերքի ոլորտում տրվող թույլտվության կամ ներդիրի գործողության կասեցման մասին | | Ծանոթա-գրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնար-կատիրոջ) անունը, ազգանունը, հանրային ծառայության համարանիշը (առկայության դեպքում) | հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | իրավա-բանական անձի գտնվելու (անհատ ձեռնար-կատիրոջ բնակության) վայրը | գործունեության իրականացման վայրի հասցեն | սերիան | համարը | գործու-նեության տեսակը | տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | համարը | գործու-նեության ոլորտը | տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | | սիմվոլը | հոդվածը | կետը | ենթա-կետը | կասեցման մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

MAR-1009